ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/119» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 27 վերանորոգվող/հիմնանորոգվող դպրոցների համար դյուրակիր համակարգիչների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 20.07.2026թ. ժամը 15:30-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	Prederiksoans LSD
2	«ԼԱԳԱ 1820» ՍՊԸ
3	Vita LLC
4	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Զբաղեցրած տեղ	Մասնակիցների անվանումները	Նախահաշվային գին	Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			Մասնակցի կարգավիճակ
				Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	
1	1	Prederiksoans LSD	80960000	6678824	0	6678824	
1	2	«ԼԱԳԱ 1820» ՍՊԸ	80960000	67462871	13492574.2	80955445.2	
1	3	Vita LLC	80960000	150000000	30000000	180000000*	Մերժված
1	4	«ՆԵՔՍԱ» ՍՊԸ	80960000	25000000000	5000000000	30000000000*	Մերժված

*Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

4. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

4.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետով սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3,Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 310 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 21.07.2026թ. ժամը 15:30-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 **Prederiksoans LSD-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ,
- Հավելված 1՝ դիմում-հայտարարությունը ստորագրված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- Բացակայում է Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հողումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տվյալներ մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 5.1 կետը, մերժել **Prederiksoans LSD**-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել **«ԼԱԳԱ 1820» ՍՊԸ-ի**

ներկայացրած հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6.3 **Vita LLC-ի և «ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը մերժվել են համակագի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հրապարակել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Արման Երանոսյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Արսեն Սողոմոնյան /քարտուղար/